ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Էդգար Գ. Հովհաննիսյան
Պատմ. գիտ. թեկնածու

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՀԻՄՆՈՒՄԸ

Եվ նրա դերը Սիրիա-Լիբանանի[1] հայկական համայնքների կրթական կյանքում*

Մուտք

Կաթողիկոսանիստ Սիսը լքելուց և շուրջ մեկ տասնամյակ տևած դեգերումներից հետո՝ 1930 թվականին, Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ն հաստատվում է Լիբանանի Անթիլիաս բնակավայրում[2], որը դառնում է ոչ միայն հայոց եկեղեցու նվիրապետական աթոռներից՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության աթոռանիստը, այլև կարևոր հոգևոր-կրոնական կենտրոն սփյուռքահայության համար: Կիլիկիո կաթողիկոսության Անթիլիասում հաստատվելու գործընթացում մեծ նշանակություն ունեցավ Դպրեվանքի հիմնումը, որը կարճ ժամանակ անց դարձավ Սփյուռքի առանցքային ուսումնական հաստատություններից մեկը:

1. Դպրեվանքի հիմնումը որպես Անթիլիասում հաստատվելու պայման

Հայտնի է, որ Անթիլիասում գտնվող շինություններում նախկինում տեղակայված էին Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեի հովանու ներքո գործող որբանոցները, որոնց լուծարումից հետո Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն որոշում է այդ շինություններն անհատույց, խորհրդանշական ամերիկյան 1 դոլար վարձակալությամբ հանձնել Կիլիկիո կաթողիկոսությանը[3]: 1930 թ. ապրիլի 7-ին Ամերիկյան նպաստամատույց կո-

* Հոդվածն ընդունվել է տպագրության 22.04.2020:

1 1920 թ. Սան-Ռեմոյի կոնֆերանսի որոշմամբ Սիրիան և Լիբանանը գտնվում էին Ֆրանսիայի մանդատային կառավարման ներքո, որը գործեց մինչև 1939 թ.: Այս շրջանում Ֆրանսիան Սիրիայում և Լիբանանում իր մանդատային իշխանությունն իրականացնում էր Գլխավոր կոմիսարի միջոցով: Ցեղասպանությունից հետո հայ գաղթականության զգալի մասը հաստավել էր հենց այս երկու երկրներում:

2 Տե՛ս **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչեւ մեր օրերը), Անթիլիաս, «Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ», 1990, էջ 1005-1010:

3 Տե՛ս նույն տեղում, էջ 1007:

Վէմ համահայկական հանդես, ԺԲ (ԺԸ) տարի, թիվ 2 (70), ապրիլ-հունիս, 2020

միտեի ընդհանուր քարտուղար Բ. Աչիսոնի և Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ի միջև կնքվում է վարձակալության պայմանագիր[4], որով նշված կալվածքները հինգ տարի ժամկետով տրամադրվում են Կիլիկիո աթոռին, որը՝ որպես վարձակալ, «....կալուածը պիտի օգտագործէ իբր վարժարան՝ եկեղեցականներու եւ ուսուցիչներու պատրաստութեան համար»[5]: Փաստորեն, Կիլիկիո կաթողիկոսության Անթիլիասում հաստատվելու գլխավոր պայմանը նոր ուսումնական հաստատություն հիմնելն էր:

Նոր բացվելիք Անթիլիասի Դպրեվանքը ինչ-որ իմաստով լինելու էր եզակի ուսումնական հաստատություն հայոց եկեղեցու համար, քանզի Առաջին աշխարհամարտի և դրան հաջորդած մի շարք այլ քաղաքական իրադարձությունների հետևանքով դադարել էին գործել Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանը, Արմաշի դպրեվանքը, Սսի վարժարանը[6] և այլ հոգևոր դպրոցներ: Կիլիկիո կաթողիկոսության երկարամյա քարտուղար Բյուզանդ Եղիայանի բնորոշմամբ՝ «Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ Անթիլիասի Դպրեվանքի հաստատումը պատասխանն էր **ազգային պահանջքի** մը»[7]: Նշենք, որ նմանատիպ ուսումնական հաստատություններ Լիբանանում հիմնվել էին նաև հայ ավետարանական և հայ կաթոլիկ համայնքների կողմից[8]:

Նորաստեղծ Դպրեվանքի համար անհրաժեշտ շինությունների հարցը կարգավորելուց հետո կարևոր խնդիր էր մնում նյութական և ֆինանսական միջոցների հայթայթումը, որը կաթողիկոսությունը սեփական ուժերով ապահովել պարզապես ի վիճակի չէր: Ուստի վերը նշված պայմանագրում Մերձավոր Արևելքի նպաստամատույց հիմնադրամի[9] կողմից ավելացվում են երկու հավելյալ կետեր՝ ֆինանսական օժանդակության վերաբերյալ, որոնք էին.

«Ա. Ամերիկայի Մերձաւոր Արեւելքի Հիմնարկութիւնը յանձն կառնէ տրամադրել տարեկան 7.000 տոլար Դպրեվանքի պահպանութեան համար:

Բ. Փոխադարձ գործակցութեամբ՝ Ամերիկայի հայերը եւս յանձն կառնեն նոյն նպատակին յատկացնել տարեկան 5.000 տոլար»[10]:

Մինչ այս պայմանագրի պատրաստումը Ամերիկայում ստեղծվել էր, այսպես կոչված, «Կիլիկիո կաթողիկոսութեան Դպրեվանքի պահպանութեան խառը յանձնախումբ», որը նպատակ ուներ հայթայթելու անհրաժեշտ ֆինանսական միջոցներ՝ նորաստեղծ Դպրեվանքի հետագա գործունեությունն ապահո-

4 Տե՛ս **Եղիայեան Բ**., Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ 1914-1972, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1975, էջ 332:

5 Նույն տեղում, էջ 332:

6 Այդ շրջանում նման դպրանոցների շարքում շարունակում էր գործել միայն Երուսաղեմի Ժառանգավորաց վարժարանը, որը, սակայն, պատրաստում էր միայն հոգևորականներ:

7 **Եղիայեան Բ**., Ժամանակակից պատմութիւն...., էջ 350:

8 Տե՛ս **Ժամխարյան Կ**., Կրթամշակութային կյանքը և հայապահպանության խնդիրները Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում 1920-1930-ական թթ., Եր., «ՀԱՀ Պոլիգրաֆ», 2019, էջ 64:

9 1930 թ. Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեն վերակազմավորվում է հիմնադրամի:

10 **Եղիայեան Բ**., Ժամանակակից պատմութիւն...., էջ 333:

վելու համար[11]: Ստորագրված պայմանագրում նշված 5000 ամերիկյան դոլարը հատկացվելու էր հենց այդ հանձնախմբի հավաքած միջոցներից, որի առյուծի բաժինը տրամադրել էին երկու ամերիկահայ բարեգործներ՝ Արշակ Կարգյոզյանը և Պատրիկ Գյուլբենկյանը՝ հատկացնելով 1500-ական դոլար[12]:

Այս ամենից հետո՝ 1930 թ. սեպտեմբերին, այնուհետև 1931 թ. հունվարին Սահակ կաթողիկոսը դիմում է Լիբանանի Հանրապետության նախագահին՝ խնդրելով պաշտոնական արտոնություն հայկական նորաբաց այդ ուսումնական հաստատության գործունեության համար: Ծուտով ստացվում է անհրաժեշտ պաշտոնական թույլտվությունը, որին իր հավանությունն է տալիս նաև ֆրանսիական Բարձր կոմիսարությունը[13]: Իրավական այս կարգավորումներից հետո արդեն կարծես թե այլ խոչընդոտներ չկային Դպրեվանքի բացման համար:

Դպրեվանքի պաշտոնական բացման արարողությունը տեղի է ունենում 1930 թ. հոկտեմբերի 12-ին՝ Ս. Թարգմանչաց տոնի օրը: Հոկտեմբերի 13-ին տեղի է ունենում առաջին դասը: Մի քանի ամիս անց նախկին որբանոցի ատաղձագործարանի շինությունը, որտեղ տեղի էր ունեցել Դպրեվանքի բացման արարողությունը, օծվում է որպես եկեղեցի՝ Սրբոց Թարգմանչաց անունով[14]: Հետագայում սա դառնում է ավանդույթ, և ուսումնական տարին սկսվում էր հոկտեմբերի կեսերից՝ Սրբոց Թարգմանչաց տոնի օրը նույնանուն եկեղեցում մատուցվող պատարագով: Դպրեվանքի բացման գործում հատկապես մեծ էր Կիլիկիո աթոռակից Բաբկեն կաթողիկոսի[15] դերակատարումը, որը նոր ուսումնական հաստատության աշակերտներին ուղղված ելույթում ընդգծում էր. «Դպրեվանքը Ազգին վրէժը լուծելու համար է հաստատուած»[16]:

2. Դպրեվանքի կրթական ծրագրերը և ուսումնական գործընթացը

Սփյուռքում եկեղեցին և դպրոցը ազգի երկու «թևերն» են: Անուրանալի է Սփյուռքում Հայ առաքելական եկեղեցու՝ որպես առանցքային հոգևոր կազմակերպության դերակատարումը[17]: Սփյուռքացման գործընթացներում և

11 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Ա. եւ Բաբգէն Բ. Կաթողիկոսներու», «Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ», N 1, խմբագիր **Գ. Շահինեան**, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1999, էջ 242-244:

12 Տե՛ս **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն...., էջ 333-334:

13 Տե՛ս նույն տեղում, էջ 349-350:

14 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», «Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ», N 4, խմբագիր՝ **Վարուժան արքեպիսկոպոս**, Նիկոսիա-Կիպրոս, «Հայկական մատենաշար Գալուստ Կիւլպենկեան հիմնարկութեան», Համազգայինի Վահէ Սէթեան տպ., 2010, էջ 303, տե՛ս նաև **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, նշվ. աշխ., էջ 1007:

15 Բաբկեն արքեպիսկոպոս Կյուլեսերյանը Մեծի Տանն Կիլիկիո աթոռակից կաթողիկոս է ընտրվել 1928 թ., իսկ օծումը տեղի է ունեցել 1931 թ.: Մահացել է 1936 թ.՝ կաթողիկոս Սահակ Բ Խապայանից երեք տարի ավելի շուտ:

16 «Հասկ», Անթիլիաս, հուլիս, 1932, N 7:

17 Տե՛ս **Tololyan Kh.**, The role of the Armenian apostolic church in the Diaspora, "Armenian review", spring 1988, N 41, էջ 55-68:

հայապահպանության հարցում ոչ պակաս կարևոր էր նաև դպրոցի և կրթության դերը, իսկ որակյալ դպրոց չի կարող գոյություն ունենալ առանց բարձրակարգ ուսուցիչների: «Հայ դպրոցը, իր բոլոր թերութիւններով ու սահմանափակումներով, կը մնայ իրական արժեք մը մեր ազգին համար: Առանց հայկական վարժարանի տոհմիկ դաստիարակութեան, մեր նոր սերունդը կըլլայ կէս հայ միայն եւ մէկ երկու սերունդ յետոյ արդէն հայութիւնը կը մնայ լոկ յիշատակ: Ձուլումի վերահաս վտանգին դէմ մեզ ապահովագրող հաստատութիւն մ'է Հայ Դպրոցը»[18],- գրում էր Անթիլիասի պաշտոնաթերթ «Հասկը»: Այսպիսով՝ Դպրեվանքի նման ուսումնական հաստատության հիմնումը գիտակցված անհրաժեշտություն էր, համազգային պահանջ: Հիմնականում այս խնդրի լուծմանն էր միտված լինելու Անթիլիասի Դպրեվանքի գործունեությունը:

Նույն պարբերականը վկայում էր նաև, որ Դպրեվանքը «....կրկնակ նպատակով հիմնուած հաստատութիւն է», որտեղ պատրաստվելու էին. «1. Հայաստանեայց Եկեղեցիին համար **քահանաներ**. 2. Հայ Ազգ. Վարժարաններու համար **ուսուցիչներ**»[19]: Այսինքն՝ Դպրեվանքը կոչված էր պատրաստելու թե՛ հոգևորականներ եկեղեցու համար և թե՛ ուսուցիչներ մատաղ սերնդի հայեցի կրթության ու դաստիարակության գործի կազմակերպման համար: Նախ և առաջ կարևորվում էր ուսուցիչների պատրաստումը, որոնց կարիքը խիստ զգում էին Սիրիայի և Լիբանանի հայկական դպրոցները[20]:

Դպրեվանք կարող էին ընդունվել 16-17 տարեկան ազգությամբ հայ պատանիները: Ուսուցումը գիշերօթիկ էր և անվճար: Դպրեվանքի աջակցության վերը նշված ամերիկյան հանձնախմբի առաջարկությամբ Սահակ Բ-ն ուսումնական հաստատության առաջին վերատեսուչ է նշանակում Բոստոնի հոգևոր հովիվ Շահե ծայրագույն վարդապետ Գասպարյանին[21], որը շուտով եպիսկոպոս է ձեռնադրվում[22]: 1931 թ. Դպրեվանքի ներքին տեսուչ է դառնում Բյուզանդ Եղիայանը[23], որը ևս հսկայական դերակատարություն է ունեցել այս ուսումնական հաստատության կայացման և հետագա գործունեության մեջ:

Դպրեվանքն իր գործունեության առաջին հնգամյա շրջանում ուներ երկու կրթական ծրագրեր: Դրանցից առաջինը, այսպես կոչված, «մասնավոր դասարանն»[24] էր, որը նախատեսված էր քոլեջական կրթություն ունեցող 22-25 տարեկան երիտասարդների համար, որոնք այդ դասընթացներն ավարտելուց հետո կարող էին աշխատել որպես մանկավարժներ: Մասնավոր դասա-

18 «Հասկ», մայիս, 1939, N 5, էջ 77:

19 Նույն տեղում, հունվար, 1932, N 1:

20 Տե՛ս նույն տեղում:

21 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Ա. եւ Բաբգէն Բ. Կաթողիկոսներու», էջ 243, 245:

22 Տե՛ս **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, նշվ. աշխ., 1990, էջ 1042, տե՛ս նաև **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն...., էջ 345:

23 Տե՛ս **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն...., էջ 346-348:

24 «Հասկ», հուլիս, 1932, N 7:

րանում ուսումը նախատեսված էր երկու տարի, որի ընթացքում ուսանողներին դասավանդվում էին ազգային և եկեղեցական պատմություն, մատենագիտություն, հայոց լեզու և գրականություն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներ ու գրականություն, ընդհանուր հոգեբանություն, փիլիսոփայություն[25] և այլն: Դպրեվանքի բացվելու հենց առաջին տարում՝ 1930 թ., վեց ուսանողներից կազմվում է առաջին մասնավոր դասարանը[26], որոնք ավարտում են ուսումը 1932 թ.: Սա այս կարևոր ուսումնական հաստատության առաջին հունձքն էր:

Դպրեվանքի երկրորդ կրթական ծրագիրը հնգամյա էր, որն էլ իր հերթին բաժանվում էր երկու կրթաշրջանների՝ համապատասխանաբար երկու և երեք տարի տևողությամբ[27]: Առաջին երկամյա շրջանը, այսպես ասած, **ընդհանուր ուսուցման** շրջանն էր, որի ընթացքում ուսանողներին դասավանդվում էին ընդհանուր զարգացվածություն ապահովող առարկաներ՝ գրաբար և աշխարհաբար, ֆրանսերեն, անգլերեն և արաբերեն, հայ եկեղեցու և հայոց պատմություն, բնական գիտություններ, երաժշտություն[28] և այլն: Իսկ ուսումնառության հաջորդ եռամյակը **մասնագիտական ուսուցման շրջանն** էր, որի ուսումնական ծրագրերում ներառված էին ավելի նեղ մասնագիտական առարկաներ աստվածաբանությունից, լեզուներից, պատմությունից, մանկավարժությունից[29] և այլն: Ուսումնական ծրագրերը, փաստորեն, մշակված էին կոնկրետ ուսուցիչ կամ քահանա պատրաստելու նպատակով: Դպրեվանքի ուսանողներն ավարտական կուրսում պատրաստում էին նաև երկու ավարտական թեզեր. մեկը՝ մանկավարժությունից, մյուսը՝ աստվածաբանությունից[30]: Ինչպես տեսնում ենք, երկու կրթական ծրագրերում էլ, բացի մասնագիտական և աստվածաբանական առարկաներից, կարևոր տեղ էր հատկացվում հոգեբանությանն ու մանկավարժությանը, քանի որ, ինչպես արդեն նշվեց, նորաստեղծ ուսումնական հաստատության կարևոր առաքելություններից մեկը հայկական վարժարանների համար ուսուցիչներ պատրաստելն էր:

Կարևոր տեղ էր հատկացվում նաև մարմնակրթությանն ու առողջ ապրելակերպին: Դպրեվանքին կից կային խաղահրապարակ և բասկետբոլի խաղադաշտ[31]:

Այսպիսով՝ Անթիլիասի Դպրեվանքի ուսումնական ծրագիրն ուներ երեք հատկանշական գծեր կամ, կարելի է ասել, մշակված էր երեք կարևոր սկզբունքների հիման վրա.

25 Տե՛ս **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն...., էջ 352:
26 Նույն տեղում:
27 Տե՛ս նույն տեղում:
28 Տե՛ս «Հասկ», փետրվար, 1932, N 2:
29 Տե՛ս **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն...., էջ 352-353:
30 Տե՛ս նույն տեղում, էջ 353:
31 Տե՛ս «Հասկ», հունվար-փետրվար, 1942, N 1-2, էջ 30:

«Ա. Հնգամեայ ուսուցմանց նիւթերն ու հիմնական սկզբունքները զուտ տոհմային են, իսկ աւանդումի մեթոտները՝ արդի եւ գիտական:

Բ. Տեսականը սերտիւ կցուած է գործնականին:

Գ. Դպրեվանքի ծրագիրը կը պահանջէ, որ իր սաները շրջանաւարտելէ առաջ, հնար եղած չափով, իրահանգուին ու մարզուին **Ազգային Ծառայութեան կեանքին մէջ** (ընդգծումը բնագրինն է - Է. Հ.)»[32]:

Փաստորեն, Դպրեվանքը հավակնում էր դառնալու իր ժամանակի համար արդիական ուսուցման մեթոդների հիման վրա գիտելիքներ ու հմտություններ ուսուցանող կրթական հաստատություն, որի հիմքում պետք է լիներ ազգայինն ու ավանդականը: Անթիլիասի Դպրեվանքը, ինչպես ցանկացած իրեն հարգող ուսումնական հաստատություն, խիստ կարևորում էր տեսականի հետ գործնական գիտելիքների և համապատասխան հմտությունների տրամադրումը, որոնք շրջանավարտներին հնարավորություն կտային ուսումնական ծրագիրն ավարտելուց հետո առանց լրացուցիչ վերապատրաստումների արագ անցնելու իրենց պարտականությունների կատարմանը: Եվ, որ ամենակարևորն է, վերը նշված սկզբունքներից պարզ է դառնում, որ Դպրեվանքի շրջանավարտները պետք է պատրաստ լինեին ազգային ծառայության համար թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ բնագավառներում: Այլ կերպ ասած՝ Անթիլիասի Դպրեվանքը նպատակ էր դրել պատրաստելու համայնքային գործիչներ, որոնց կարիքն անչափ զգում էին դեռևս իրենց կայացման ճանապարհին անցնող Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքները: Եվ հենց Դպրեվանքի շրջանավարտներն էին, որ գալու էին փոխարինելու ազգային-համայնքային գործիչների առաջին կամ ավագ սերնդին:

Դպրեվանքի առաջին սաների ընտրությունը կատարվում է օգոստոս ամսին Հալեպում վերատեսուչ Շահե ծ. վարդապետի կողմից: Վերջինս քննում է 87 պատանիների՝ Հալեպից, Հյուսիսային Սիրիայից և Ալեքսանդրետից: Տասնյակ պատանիներ վերջինիս կողմից քննության են ենթարկվում նաև Անթիլիասում[33]: Դպրեվանքում ուսանելու համար դիմորդ-թեկնածուներից «Յարմարագոյնները կընտրուին լեզուական, ուսումնական, գիտական ու պատմական նիւթերու մէջ գրաւոր «մուտքի քննութիւն» անցընելով եւ առաջնորդարաններէ տրուած բարի վարուց վկայականի, բժշկական վկայագրի, ինչպես նաեւ անհատական տեսակցութեան ու բերանացի քննութեանց թողած տպաւորութեանց հիման վրայ»[34]:

32 Նույն տեղում, փետրվար, 1932, N 2:

33 Տե՛ս **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն..., էջ 336, 354:

34 Նույն տեղում, էջ 354:

Առաջին ուսումնական տարում Դպրեվանք է ընդունվում 38 աշակերտ[35], որոնք բաժանվում են երեք դասարանների: Նրանք բոլորն էլ Սիրիայի կամ Լիբանանի հայկական գաղթօջախներից էին: Ուսուցիչների թիվն առաջին տարում 7-ն էր, հետո դարձավ 10[36], ապա՝ 12, որոնցից 5-ը այցելու ուսուցիչներ էին[37], իսկ մյուսները հոգևորականներ էին կամ կաթողիկոսարանի աշխարհիկ աշխատակիցներ: 1934 թ. Դպրեվանքում աշխարհաբար էր դասավանդում սփյուռքահայ բանաստեղծ Վահե Վահյանը[38]: Գործունեության առաջին հինգ տարիներին Դպրեվանքի ուսանողների թիվը չէր անցնում 40-ը[39]: Խնդիրն այն էր, որ Անթիլիասը պարզապես հնարավորություն չուներ ավելի մեծ թվով ուսանողների կրթության ծախսերը հոգալու համար: Առաջին տարեշրջանի ծախսերը կազմել են 13638 դոլար, որից 7000-ը տրամադրել էր Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն, 5000-ը՝ ամերիկահայ բարերարները, իսկ մնացած գումարը հատկացրել էր կաթողիկոսարանը սեփական միջոցներից[40]: Ծուտով նորաբաց ուսումնական հաստատությանն իր նյութական օժանդակությունն է տրամադրում նաև ֆրանսիական Բարձր կոմիսարությունը, որը, բացի անվճար տրամադրած ֆրանսերենի ուսուցչից, հատկացնում է 10000 ֆրանկ[41]:

Աշակերտները տարեկան երկու անգամ՝ տարեվերջին և տարվա կեսին, հանձնում էին բանավոր և գրավոր քննություններ, իսկ յուրաքանչյուր ամիս՝ գրավոր աշխատանքներ[42]: 1933 թվականից սկսած՝ ուսանողները պետք է պատրաստեին նաև 40-60 էջի սահմաններում ձեռագիր ուսումնասիրություններ[43]: Տարեվերջյան քննություններին հաճախ ներկա էին լինում նաև կաթողիկոսները, հատկապես Բաբկեն վեհափառը[44]: Ավանդույթ էր դարձել, որ քննաշրջանն ավարտելուց հետո Դպրեվանքի «ուսուցչութիւնը, ուսանողութիւնը և պաշտօնէութիւնը» միասին կազմակերպում էին «դաշտային հացկերույթ» Անթիլիասից ոչ հեռու գտնվող Նահր-էլ-Քելպ աղբյուրի մոտ[45]: Ուսանողներն ակտիվորեն մասնակցում էին կաթողիկոսարանի կազմակերպած միջոցառումներին, տոնական և ամանորյա հանդեսներին, նախաձեռնում գրական երեկույթներ, բեմադրում սիրողական ներկայացումներ՝ ինչպես հայ, այնպես էլ օտարազգի գրողնե-

35 Տե՛ս նույն տեղում, էջ 355: Բաբկեն Ա. Կյուլեսերյանը նշում է 37 աշակերտ (տե՛ս **Բաբգէն Ա. Կիւլէսէրեան**, նշվ. աշխ., էջ 1039, 1048):

36 Տե՛ս «Հասկ», փետրվար, 1932, N 2:

37 Տե՛ս նույն տեղում, օգոստոս-հոկտեմբեր, 1932, N 8-10:

38 Տե՛ս նույն տեղում, հոկտեմբեր, 1934, N 10:

39 Տե՛ս **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն...., էջ 355-356, տե՛ս նաև «Հասկ», օգոստոս-հոկտեմբեր, 1932, N 8-10, հոկտեմբեր, 1934, N 10:

40 Տե՛ս **Եղիայեան Բ**., Ժամանակակից պատմութիւն..., էջ 350:

41 Տե՛ս նույն տեղում:

42 Տե՛ս «Հասկ», փետրվար, 1932, N 2:

43 Տե՛ս նույն տեղում, հուլիս-օգոստոս, 1933, N 7-8:

44 Տե՛ս նույն տեղում:

45 Տե՛ս նույն տեղում:

րի ստեղծագործությունների հիման վրա[46]: Որոշ աշակերտների, ուսումը դեռ չավարտած, ուսմանը զուգընթաց, որպես «ուսուցչական փորձառութիւն», հնարավորություն էր տրվում դասավանդելու ազգային վարժարաններում կամ կաթողիկոսարանի մանկապարտեզ-նախակրթարանում[47]:

Յուրաքանչյուր ուսումնական հաստատության որակը պայմանավորված էր նաև հարուստ գրադարանի առկայությամբ: Դպրեվանքի հիմնադրումից հետո Անթիլիասի հոգևոր պետերը աշխատանքներ են տանում այդ կրթօջախին կից մատենադարան հիմնելու ուղղությամբ: Այսպես, 1931 թ. մի քանի ամերիկահայեր այդ նպատակով նվիրաբերում են 500 ԱՄՆ դոլար[48]: Մեկ տարի անց՝ 1932 թ., Դպրեվանքի սրահներից մեկը վերածվում է մատենադարանի[49]: Անթիլիասը ձեռնամուխ է լինում նորաստեղծ մատենադարանը անհրաժեշտ գրքերով համալրելու գործին[50]: Այն մամուլի հավաքածուներով համալրելու նպատակով Անթիլիասի պաշտոնաթերթ «Հասկի» համարներն ուղարկվում են բոլոր հայկական թերթերի ու հանդեսների խմբագրատներ, և միաժամանակ վերջիններիս կոչ է արվում տրամադրելու իրենց հրատարակած թերթերի ու հանդեսների օրինակները[51]: Շուտով, որպես արձագանք այս կոչին, Սփյուռքում տպագրվող մի շարք թերթեր և ամսագրեր սկսում են իրենց հրատարակությունների փոխանակումները «Հասկի» լրակազմերի հետ[52]: Հետագա տարիներին նվիրատվությունները մատենադարանին՝ թե՛ նյութական միջոցների և թե՛ գրքերի տեսքով, ավելացվում են տարբեր անհատների և կազմակերպությունների կողմից՝ աշխարհի տարբեր ծայրերից[53]: Արդեն 1936 թ. այս ամենի շնորհիվ մատենադարանում հավաքվել էին ավելի քան 4000 հատոր հայերեն, ֆրանսերեն և անգլերեն գրքեր[54], որոնց թիվը 1940-ական թվականների սկզբներին հասնում էր մոտ 6000-ի: Մատենադարանի ղեկավարումը հանձնվում է Ղևոնդ վարդ. Չեպեյանին[55]:

Կիլիկիո կաթողիկոսության գործունեության մեջ կարևոր դերակատարում է ունենում Դպրեվանքի տպարանը: Այստեղ տպագրվում են անհրաժեշտ դասագրքերն ու գրքերը՝ նախատեսված Անթիլիասի ենթակայության տակ գործող ուսումնական հաստատությունների համար: Այդօրինակ առաջին հրատարակություններից էին Բաբկեն կաթողիկոսի հեղինակած «Քրիստոնէական»-ը՝ նախատեսված նախակրթարանների, բարձր դասարանների աշակերտների և ընդհանրապես հայ ընտանիքների համար, Բյուզանդ Եղիայանի կողմից գրված «Կ-

46 Տե՛ս նույն տեղում, հունվար, 1934, N 1, մայիս-հունիս, 1935, N 5-6:
47 Տե՛ս նույն տեղում, փետրվար, 1932, N 2, հուլիս-օգոստոս, 1934, N 7-8:
48 Տե՛ս նույն տեղում, փետրվար, 1932, N 2:
49 Տե՛ս նույն տեղում:
50 Տե՛ս նույն տեղում:
51 Տե՛ս նույն տեղում:
52 Տե՛ս նույն տեղում, ապրիլ, 1932, N 4, հունվար, 1938, N 1-2 և այլն:
53 Տե՛ս նույն տեղում, ապրիլ, 1932, N 4, օգոստոս-հոկտեմբեր, 1932, N 8-10, դեկտեմբեր, 1932, N 12, հունվար, 1933, N 1, մարտ, 1933, N 3, ապրիլ, 1933, N 4, հունիս-օգոստոս, 1936, N 6-8 և այլն:
54 Տե՛ս նույն տեղում, հունիս-օգոստոս, 1936, N 6-8, հուլիս-օգոստոս, 1937, N 7-8, էջ 102:
55 Տե՛ս նույն տեղում, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1941, N 9-10, էջ 129:

ոնք եւ Կեանք»[56]-ը և այլն: Դպրեվանքի տպարանն ակտիվորեն սկսում է տպագրել մի քանի մատենաշարեր, մասնավորապես՝ «Կրօնական Մատենադարան» շարքը[57]: Նշենք, որ ազգային վարժարանների համար նախատեսված դասագրքերի օգտագործումը ևս թույլատրվում էր միայն Կիլիկիո կաթողիկոսության համապատասխան հաստատմամբ: Երբեմն այդ դասագրքերը տպագրված էին լինում այլ գաղութներում[58]: Անթիլիասի տպարանում շատ գրքերի հրատարակությունը ֆինանսավորվում էր առանձին հայ բարերարների նվիրատվությունների շնորհիվ[59]: Այսպես, 1936 թ. ընթացքում խոշոր նվիրատուներ էին Նյու Յորքից Կյուլպենկյան եղբայրները (1500 ԱՄՆ դոլար), Գարգյոզյանները (1000 ԱՄՆ դոլար), 500 սիրիական ոսկի տրամադրել էր ֆրանսիական կոմիսարությունը, խոշոր նվիրատուների թվում էր նաև Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն[60] և այլն:

1935 թ. Դպրեվանքն ունենում է 16 շրջանավարտ[61]: Նույն թվականի մայիսին տեղի է ունենում վերջիններիս ձեռնադրությունը որպես կիսասարկավագներ և ավագ սարկավագներ[62]: Ձեռնադրությունը կատարվում է Դպրեվանքի վերատեսուչ Շահե սրբազանի կողմից: Ձեռնադրված սարկավագներից երկուսը՝ Սիմոն Փայասլյանը և Հայկ Փոլադյանը, մի քանի շաբաթ անց օծվում են աբեղաներ, որոնցից առաջինը հետագայում դառնում է Կիլիկիո կաթողիկոս: Սա Սփյուռքում հաստատված այս կարևոր ուսումնական հաստատության կողմից հոգևորականներ պատրաստելու ջանքերի առաջին արդյունքն էր, որոնց կարիքը խիստ զգում էին հայկական համայնքները: «Դպրեվանքը մխրճուած էր լռին, բայց բոլորանուէր աշխատանքի մէջ: Ո՛չ շռնդալից ծանուցում, ո՛չ պարբերական յայտարարութիւն, այլ միայն գործ ու աշխատանք»[63],- այսպես է գնահատում «Հասկը» Դպրեվանքի գործունեության հինգ տարիները:

1935 թ. ուսումնական տարեվերջին, հաշվի առնելով, որ Դպրեվանքն ավարտում են առաջին սաները, Անթիլիասի կաթողիկոսարանում կազմակերպվում են մի շարք հանդեսներ[64], որոնց ընթացքում կաթողիկոսարանի Մեծ տաղավար եկեղեցում տեղի է ունենում առաջին 16 շրջանավարտների վկայականների հանձնումը[65]: Տոնակատարություններն ավարտվում են ավանդական դարձած դաշ-

56 Տե՛ս նույն տեղում, դեկտեմբեր, 1932, N 12:
57 Տե՛ս նույն տեղում, հոկտեմբեր, 1934, N 10:
58 Տե՛ս նույն տեղում, դեկտեմբեր, 1932, N 12:
59 Տե՛ս նույն տեղում, հունիս-օգոստոս, 1936, N 6-8:
60 Տե՛ս նույն տեղում, հուլիս-օգոստոս, 1937, N 7-8, էջ 105:
61 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 4438, թ. 1, տե՛ս նաև «Հասկ», հունիս-օգոստոս, 1936, N 6-8:
62 **Եղիայեան Բ.**, Սերունդի մը դաստիարակութիւնը, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1962, էջ 408, տե՛ս նաև «Հասկ», մայիս-հունիս, 1935, N 5-6, հոկտեմբեր, 1934, N 10:
63 «Հասկ», հուլիս-օգոստոս, 1935, N 7-8:
64 Տե՛ս նույն տեղում, մայիս-հունիս, 1935, Հավելված:
65 Տե՛ս նույն տեղում, հուլիս-օգոստոս, 1935, N 7-8:

տասեղանով Նահր-էլ-Քելպի աղբյուրի մոտ: Այս առթիվ Անթիլիաս է ժամանում նաև Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ սրբազանը[66]:

Առաջին շրջանավարտներն ունենալուց հետո Անթիլիասը թեմական սրբազաններին, կրոնական ժողովներին և թաղական խորհուրդներին հորդորում է, որ Դպրեվանքի ուսուցիչ շրջանավարտներին «ասպարէզ տրուի ազգային վարժարաններու մէջ»՝ միաժամանակ կոչ անելով եկեղեցիներին շրջանավարտ քահանաներին հրավիրելու ծառայության և խուսափելու անպատրաստ անձանց քահանա ձեռնադրելուց[67]:

Դպրեվանքի առաջին շրջանավարտներից 3-ը աշխատանքի են անցնում Լիբանանի թեմի ազգային վարժարաններում, 5-ը՝ Հալեպի թեմի, 3-ը՝ Դամասկոսի թեմի, 5-ը՝ Անտիոքի թեմի, և 1-ն էլ՝ Կիպրոսի ազգային վարժարաններից մեկում[68]: Նրանց թվում էին նաև Դպրեվանքի մասնավոր դասարանի նախկին սաները: Առաջին շրջանավարտներից Զարեհ Փայասլյանը, Երվանդ Վարդանյանը և Արմեն Ճերեճյանը՝ որպես Նուբարյան կրթաթոշակակիրներ, ուսումը շարունակում են բելգիական համալսարաններում՝ մանկավարժություն ուսումնասիրելու նպատակով[69]: Իսկ Դերենիկ աբեղան հետագայում ուսումնառում է ԱՄՆ-ի մի շարք համալսարաններում և 1944 թ. Նյու Յորքի համալսարանում ստանում փիլիսոփայության դոկտորի աստիճան՝ պաշտպանելով «Հայ եկեղեցու դաստիարակչական դերը» խորագրով ավարտաճառ[70]: Նոր շրջանավարտները, լինելով որակյալ մասնագետներ, իրենց կարևոր ներդրումն են ունենում սփյուռքյան կրթական, ինչպես նաև հոգևոր ու հասարակական կյանքում: Անթիլիասը պարբերաբար հետևում էր իր շրջանավարտների աշխատանքային գործունեությանը, և, դատելով ստացված տեղեկություններից, ազգային վարժարանները գոհ էին նրանց մասնագիտական որակներից[71]:

Այն, որ գրեթե բոլոր առաջին շրջանավարտներն անմիջապես ուսուցչական աշխատանքի են անցնում Սիրիայի և Լիբանանի հայկական դպրոցներում, վկայում է որակյալ մասնագետների այն մեծ պահանջարկի մասին, որ ունեին Սփյուռքի հայկական ուսումնական հաստատությունները: Սրանով արդեն իսկ արդարացվում է այն որոշումը, որի արդյունքում Անթիլիասի Դպրեվանքն իր կարևոր առաքելությունն է կատարում Սփյուռքում մինչ օրս: Դպրեվանքի առաջին 16 շրջանավարտներից միայն երկուսն են, որ ավարտելուց հետո մանկավարժական գործունեությամբ չեն զբաղվում[72]: Դպրեվանքի

66 Տե՛ս նույն տեղում:
67 Տե՛ս նույն տեղում, հոկտեմբեր, 1935, N 10:
68 Տե՛ս նույն տեղում:
69 Տե՛ս նույն տեղում, հուլիս-սեպտեմբեր, 1935, սեպտեմբեր-հոկտեմբեր, N 9-10, էջ 152, 1936, N 7-9, հուլիս-օգոստոս, 1937, N 7-8, էջ 100, նոյեմբեր, 1938, N 11, էջ 162:
70 Տե՛ս նույն տեղում, մայիս-հուլիս, 1944, N 5-7, էջ 104:
71 Տե՛ս նույն տեղում, հունիս-օգոստոս, 1936, N 6-8:
72 Տե՛ս նույն տեղում:

տարբեր տարիների շրջանավարտներից շատերը ստանձնում են նաև տարբեր հայկական վարժարանների տնօրենների պաշտոններ[73]:

Իսկապես, առաջին հինգ տարիների՝ 1930-1935 թթ. ընթացքում Դպրեվանքը կայացման լուրջ ճանապարհ անցավ՝ դառնալով սփյուռքյան առանցքային կրթական հաստատություններից մեկը: Կիլիկիո կաթողիկոսությունն ամեն ինչ արեց Դպրեվանքի կայացման համար, որն էլ իր հերթին նպաստեց կաթողիկոսության ամրապնդմանն ու դերակատարության մեծացմանը, Բաբկեն կաթողիկոսի բնորոշմամբ, դառնալով «Կաթողիկոսութեան ջիղը»[74]:

3. Կիլիկիո կաթողիկոսության ջանքերը Դպրեվանքի պահպանման ուղղությամբ

Ամերիկյան նպաստամատույց ընկերությունը, 1935 թ. սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամով պայմանավորված, դադարեցնում է Դպրեվանքին նպաստի տրամադրումը[75]: Այդ բարեգործական կառույցը հրաժարվում է նաև Անթիլիասի կալվածքները հաջորդ հինգ տարիների համար կաթողիկոսությանը անվճար տրամադրելուց և որոշում է վաճառել դրանք՝ որպես գնորդ նախ և առաջ դիտարկելով Կիլիկիո կաթողիկոսությանը[76]: Արդեն 1935 թ. Դպրեվանքի կարիքների համար անհրաժեշտ գումարի բացը լրացվում էր կաթողիկոսարանի կողմից 600 սիրիական թղթոսկիով[77]: Անթիլիասը հայտնվում է ծանր դրության մեջ: Բաբկեն կաթողիկոսը Գարեգին արք. Հովսեփյանին ուղղած նամակում գրում էր. «Կաթողիկոսարանս եւ Դպրեվանքը մտան այս տարի դրամական մեծ նեղութեան մէջ, որովհետեւ Ամերիկեան Նիր Իսթ Ֆաունտէյշընը[78] հաշուեյարդարի ենթարկեց իր գործերը եւ կրճատեց նպաստը....»[79]: Անհրաժեշտ միջոցների հայթայթման համար Կիլիկիո գահակալները ձեռնարկում են մի շարք քայլեր[80]: Բաբկեն աթոռակից կաթողիկոսը դիմում է Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա-ին՝ վերջինիս խնդրելով տրամադրել տարեկան 500 անգլիական ոսկի Արգարյան կտակից[81]:

---

73 Տե՛ս նույն տեղում, հուլիս-օգոստոս, 1937, N 7-8, էջ 100-101:

74 **Եղիայեան Բ.**, ժամանակակից պատմութիւն...., էջ 336:

75 Տես «Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ երեք կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբէկեանի», «Կիլիկիոյ կաթողիկոսութեան արխիւներ», N 3, խմբագիր՝ **Գ. Շահինեան**, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2002, էջ 105-106, տե՛ս նաև «Հասկ», նոյեմբեր-դեկտեմբեր, 1935, N 11-12:

76 Տ՛ես «Լիբանանահայ համայնքը 1915-1990 թվականներին ըստ արխիվային փաստաթղթերի», խմբագիր՝ **Ա.Վիրաբյան**, Եր., «Հայկարլի», 2017, էջ 79-80:

77 Տե՛ս նույն տեղում:

78 Նկատի ունի Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց ընկերությունը:

79 «Գարեգին Ա. Յովսէփեան. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ (1943-1952)», հատ. Բ, Փաստաթուղթերու եւ նիւթերու ժողովածու, խմբագիր՝ **Գ. Ալազեան**, Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2017, էջ 29:

80 Տե՛ս «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության», Գիրք Դ, S.S. Սահակ Բ Խապայեան. կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ 1891-1940 թթ., խմբագիր՝ **Ս. Բեհբության**, Եր., «Ոսկան Երևանցի», 1997, էջ 508:

81 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 409, g. 1, գ. 4483, թ. 1, տե՛ս նաև «Թղթակցութիւն Մեծի Տանն Կիլիկիոյ երեք կաթողիկոսներու եւ Ամենայն Հայոց կաթողիկոս Խորէն Ա. Մուրադբէկեանի....», էջ 106:

Նամակագիրը Խորեն վեհափառից հարցնում էր նաև. «....բարոյապէս կարո՞ղ էք օգնել մեզի ազդեցիկ կոնդակներ գրելով Հնդկաստան եւ Ճաւայի մեծահարուստ եւ մեծահաւատ հայոց եւ եկեղեցիներու, եւ շնորհիւ իրենց օգնութեան՝ Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը տէր ըլլայ Անթիլիասի կալուածին եւ մեր Դպրեվանքն ալ կարենայ շարունակել իր ընթացքը»[82]: Սահակ կաթողիկոսը Կիպրոսի թեմի առաջնորդ Պետրոս սրբազանին գրած նամակներից մեկում դժգոհություն էր հայտնում, որ Դպրեվանքին աջակցության հարցում «մերային անտարբեր» են, և հիմնական աջակիցները օտարներն են[83]: Նշենք, որ արխիվային փաստաթղթերը ցույց են տալիս, որ տարբեր նպատակներով Մայր Աթոռը նշված Աբգարյան կտակից որոշակի օժանդակություն է տրամադրել Կիլիկիո կաթողիկոսությանը[84]:

Նախքան ցեղասպանությունը ծխախոտի վաճառական Մաթևոս Խերյանը Սահակ կաթողիկոսին էր տրամադրել 1700 օսմանյան ոսկի՝ որևէ բարեգործական նպատակով օգտագործելու համար: Առաջին աշխարհամարտը և կիլիկիահայության տարագրությունը այդ դրամի նպատակային օգտագործման հնարավորություն չեն ընձեռում: Եվ ահա նման հնարավորություն ստեղծվում է 1935 թ., երբ Սահակ վեհափառի նախաձեռնությամբ Բեյրութում մեկնարկում են բարերարի անունը կրող «Խերյան» կալվածքի կառուցման աշխատանքները[85]: Կալվածքից հետագայում ստացվելիք եկամուտները հատկացվելու էին Դպրեվանքին[86]: Սա անչափ կարևոր ձեռնարկ էր ուսումնական հաստատությունը թեև ոչ բավարար, բայց կայուն նյութական միջոցներով ապահովելու ուղղությամբ: Կաթողիկոսարանի ֆինանսական խնդիրները մեղմացնում, բայց ամբողջությամբ չէր լուծում նաև ՀԲԸՄ-ի միջոցով հանգուցյալ բարերար Կարապետ Մելքոնյանի՝ Անթիլիասին տրամադրված տարեկան 1000 անգլիական փունտ ստերլինգի կտակը[87]: Դպրեվանքի պահպանումը պահանջում էր հսկայական ծախսեր: Փաստերի վկայությամբ՝ կաթողիկոսարանը տարբեր աղբյուրներից գոյացած իր ֆինանսական միջոցների ու եկամուտների կեսից ավելին ծախսում էր Դպրեվանքի պահպանման և նրա կարիքների համար[88]:

Այս պայմաններում բարձր չէին նաև Դպրեվանքի աշխատակիցների աշխատավարձերը: Ղեկավար կազմի ամսական աշխատավարձը կազմում էր 18 սիրիական կամ 2 անգլիական ոսկի, իսկ ուսուցչական կազմինը՝ 22.5 սիրիական կամ 2.5 անգլիական ոսկի[89]:

82 ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4483, թ. 1:
83 Տե՛ս «Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի», էջ 292:
84 Տե՛ս **Հակոբյան Մ**., Փաստաթղթեր Աբգարյան ավանդի և նրա գործունեության մասին, «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., «Հայկարլի», 2018, էջ 156-192:
85 Տե՛ս «Հասկ», հունվար, 1935, N 1:
86 Տե՛ս նույն տեղում:
87 Տե՛ս նույն տեղում, հունիս-օգոստոս, 1936, N 6-8, հուլիս-օգոստոս, 1938, N 7-8, էջ 117:
88 Տե՛ս նույն տեղում, օգոստոս-հոկտեմբեր, 1944, N 8-10, էջ 139:
89 Տե՛ս նույն տեղում, հուլիս-օգոստոս, 1938, N 7-8, էջ 117:

1935 թ. ուսումնական տարվանից, փաստորեն, նոր շրջափուլ է սկսվում Դպրեվանքի համար: Այդ թվականից սկսած՝ բավարար նյութական միջոցների բացակայության պայմաններում Դպրեվանքի ուսանողների թիվը կիսով չափ կրճատվում է. «Առաջ կը հոգար 40 ուսանողներ, հիմայ գրեթէ կէսի իջեցուած է»[90],- գրում է «Հասկը»: Դպրեվանքի համար անհրաժեշտ բոլոր ծախսերը ծանրանում են կաթողիկոսարանի վրա: Հնգամյա տարեշրջանից հետո նույն պատճառով փոխվում է նաև Դպրեվանքի կրթական ուղղվածությունը: Եթե նախկինում այս ուսումնական հաստատությունը պատրաստում էր քահանաներ և ուսուցիչներ, ապա այդուհետ «կամփոփուի միմիայն եկեղեցականներ պատրաստելու նպատակին շուրջ»[91]: Այդ պատճառով փոխվում են նաև ուսումնական ծրագրերը, որոնցից հանվում են մանկավարժական առարկաները, և ավելացվում են կրոնական բնույթի առարկաները: 1935-1936 ուսումնական տարվանից սկսած՝ Դպրեվանքն այլևս պատրաստելու էր միայն կուսակրոն հոգևորականներ հայոց եկեղեցու համար: Ուսուցումը, նախկին հինգի փոխարեն, դառնալու էր յոթ տարի: Ուսուցման յոթ տարիները բաժանվում էին երկու շրջանների՝ չորս տարի՝ Ժառանգավորաց բաժնի համար, և ևս երեքը՝ արդեն որպես Ընծայարան[92]: Ժառանգավորաց բաժնի շրջանավարտներին տրվում էր սարկավագի կոչում, իսկ Ընծայարանի շրջանավարտներին՝ քահանայի (աբեղա): Նախատեսվում էր նաև «յետընթացաւարութեան» շրջան՝ երկու տարի տևողությամբ, վարդապետական թեզի պատրաստման համար[93]: Հետագայում ավելանում են նաև «քահանայից դասարանները»: Փաստորեն, գործունեության առաջին հնգամյա շրջանից հետո Դպրեվանքը վերածվում էր հոգևոր ճեմարանի: Այս ամենով հանդերձ՝ Դպրեվանքի դերն ու նշանակությունը չի նվազում թե՛ Կիլիկիո կաթողիկոսության համար և թե՛ Սփյուռքի կյանքում ընդհանրապես, հատկապես երբ Գարեգին Ա Հովսեփյանի կաթողիկոսության շրջանում Դպրեվանքի համար զարգացման նոր շրջան է մեկնարկում:

Այսպիսով՝ գործադրված ջանքերի շնորհիվ Դպրեվանքը, որոշ վերափոխումներով հանդերձ, շարունակեց իր գործունեությունն ու պատմական առաքելությունը: Արդեն 1938 թ., Անթիլիասի Մայր տաճարի կառուցմանը զուգահեռ, մեկնարկում են նոր վեհարանի և Դպրեվանքի նոր եռահարկ շենքի կառուցման աշխատանքները[94], որոնք ավարտվում են հաջորդ տարվա սկզբներին, և արդեն մարտ ամսից դասերը կազմակերպվում են նորակառույց շենքում[95]: 1950-ական

90 Նույն տեղում, հոկտեմբեր, 1935, N 10:

91 Նույն տեղում:

92 Տե՛ս «Ալպոմ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան եւ Դպրեվանքին», Անթիլիաս, Տպարան Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1959, էջ 4:

93 Տե՛ս **Եղիայեան Բ.**, Ժամանակակից պատմութիւն...., էջ 582:

94 Տե՛ս «Հասկ», սեպտեմբեր-հոկտեմբեր, 1938, N 9-10, էջ 146:

95 Տե՛ս նույն տեղում, ապրիլ, 1939, N 4, էջ 63-64:

թթ. սկզբներին կառուցվում է նոր՝ ավելի ընդարձակ շենք, իսկ 1978 թ. Դպրեվանքը տեղափոխվում է Բեյրութից հյուսիս-արևելք ընկած Բիկֆայա գյուղը:

Թեև հետագա տասնամյակներին Դպրեվանքի հիմնական առաքելությունը, ինչպես նշվեց, դառնում է հոգևորականներ պատրաստելը, սակայն միշտ չէր, որ այդ ուսումնական հաստատության տարբեր բաժիններ ավարտածներն անցնում էին հոգևոր ծառայության: Հաճախ շրջանավարտներից շատերն անցնում էին ուսուցչական աշխատանքի հայկական համայնքների տարբեր դպրոցներում: Վիճակագրական տվյալների համաձայն՝ 2000-ական թթ. սկզբի դրությամբ Անթիլիասի Դպրեվանքն իր գոյության ողջ ընթացքում ունեցել է 1600 շրջանավարտ՝ տարբեր երկրների հայկական համայնքներից, որոնցից շուրջ 250-ն անցել են ուսուցչական աշխատանքի[96]: Դպրեվանքն այսօր էլ շարունակում է իր պատմական առաքելությունը իր երկու՝ Ժառանգավորաց և Ընծայարան բաժիններով, յուրաքանչյուրը՝ չորս տարի տևողությամբ ուսումնական ծրագրերով: Ժառանգավորաց բաժինը համազոր է երկրորդական վարժարանի, իսկ Ընծայարանը տալիս է աստվածաբանական և հայագիտական կրթություն[97]: Այսօր էլ Դպրեվանքի շատ շրջանավարտներ, բացի հոգևոր ծառայությունից, Սփյուռքի դպրոցներում աշխատում են որպես հայոց լեզվի և կրոնի ուսուցիչներ:

Եզրակացություններ

Դպրեվանքի նման կրթական հաստատության հիմնադրումն ինքնանպատակ չէր, այլ ստեղծված իրողությունների պայմաններում այն ուղղակի անհրաժեշտություն էր: «Ազգը այդ տարասփիւռ վիճակին մէջ, այնքա՛ն եկեղեցականներու, մտաւորականներու եւ ուսուցիչներու նահատակութենէն ետք, առօրեայ հացին չափ եւ հացին պէս պէտք ունէր նոր հոգեւորական եւ աշխարհական սպասաւորներու, ղեկավարներու»[98]: Այս տողերը լավագույնս են հիմնավորում Դպրեվանքի ստեղծման հրատապ անհրաժեշտությունը: Ընդհանրապես հարկ է ընդգծել, որ նոր ձևավորվող սփյուռքյան համայնքների կրթական գործի կազմակերպման առաջին նախաձեռնողները հենց հայոց հոգևոր իշխանություններն էին[99]:

Հիրավի, Դպրեվանքը ժամանակի ընթացքում «համազաղութային տարողութիւն» է ձեռք բերում: Դրա հիմնադրման արդարացիությունը և անհրաժեշտությունը ակնհայտ են դառնում տարիներ անց, երբ այդ հաստատության

96 Տե՛ս «Հայ Սփյուռք հանրագիտարան», Եր., «Հայկական հանրագիտարան» հրատ., 2003, էջ 305:

97 Տե՛ս «Դպրեվանք», Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության պաշտոնական կայքէջ, https://www.armenianorthodoxchurch.org/tbrevank (մուտք՝ 14.04.2020):

98 «Դպրեվանք Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ. Յիսնամեակ (1930-1980)», Նյու-Յորք, 1981, էջ 6:

99 Տե՛ս **Չօլաքեան Յ.**, Հայ վերապրողներու տեղաբաշխումը եւ կրթական գործի կազմակերպումն ու դպրոցները Սուրիոյ մէջ (1918-1946), «Սուրիոյ հայերը», գիտաժողովի նիւթեր, Պէյրութ, 2018, էջ 278-298:

շրջանավարտները պատասխանատու ծառայության են անցնում ոչ միայն ուսումնական հաստատություններում, այլև համայնքային տարբեր կառույցներում: Նրանց գործունեության շրջանակը դուրս է գալիս Սիրիայի և Լիբանանի հայկական գաղութներից՝ ընդգրկելով աշխարհի զանազան հայաշատ կենտրոններ՝ Մերձավոր Արևելքից մինչև Ամերիկա, իսկ արդեն 1950-ական թթ. սկսած՝ «Կիլիկիո կաթողիկոսութեան հոգեւոր ու վարչական գործը… կը կառավարուի Դպրեվանքի շրջանավարտներու կողմէ սկսեալ Ծնորհազարդ Տ.Տ. Զարեհ Ա. Կաթողիկոսէն»[100]: Փաստորեն, Դպրեվանքի տված կադրերը շատ շուտով արժանավայել կերպով փոխարինեցին նախորդ սերնդի սփյուռքյան հոգևոր, հաճախ նաև աշխարհիկ ազգային գործիչներին[101]:

Այսպիսով՝ Դպրեվանքի հիմնադրումը ոչ միայն հիմք հանդիսացավ տարագիր Կիլիկիո կաթողիկոսության Անթիլիասում հաստատվելու համար, այլև այդ կրթական հաստատությունն իր գործունեության շնորհիվ ձեռք բերեց համասփյուռքյան նշանակություն՝ իր պատմական առաքելությունը շարունակելով նաև մեր օրերում: Այս առումով թերևս իրենց արդիականությունը չեն կորցրել Սահակ Բ-ի՝ 1936 թ. արտասանած խոսքերը. «....լսեցէ՛ք, պահեցէք Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը..., գացէք Դպրեվանքը պահեցէք, առանց Դպրեվանքի անհիմաստ պիտի ըլլար Կաթողիկոսարանի գոյութիւնը»[102]:

Էլեկտրոնային հասցե՝ hovhannisyanedgar@yahoo.com

Էդգար Գ. Հովհաննիսյան - ունի ավելի քան 30 գիտական հրապարակումներ, գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայկական սփյուռքի, Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների, հայկական հոգևոր-կրոնական կառույցների գործունեության հարցերը, զբաղվում է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության 20-րդ դարի պատմության հիմնախնդիրներով:

100 «Ալպոմ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան եւ Դպրեվանքին», էջ 6:
101 Տե՛ս «Դպրեվանք Կաթողիկոսութեան Մեծի Տանն Կիլիկիոյ. Յիսնամեակ (1930-1980)», էջ 8:
102 «Հասկ», սեպտեմբեր-հոկտեմբեր, 1936, N 9-10, էջ 112:

Summary

THE FOUNDATION OF DPREVANK OF THE CATHOLICOSATE OF THE GREAT HOUSE OF CILICIA

And its role in the educational life of Armenian communities of Syria-Lebanon

Edgar G. Hovhannisyan
Candidate of Sciences in History

Key words - The Catholicosate of the Great House of Cilicia, Antelias, Dprevank, Armenian Diaspora, Armenian communities of Syria-Lebanon, educational life.

After leaving Cilicia, in 1930 the Catholicosate of the Great House of Cilicia was established in Antelias, Lebanon, which further gradually transformed not only as of the seat of the Catholicosate of Cilicia but also to the important spiritual center for the Armenian Diaspora. It is well-known that the formerly located orphanages under the auspices of the American Committee for Relief in the Near East were located in those buildings in Antelias. Following the demolition of those orphanages, the Near East Relief decides that these constructions are handed over for free to the Catholicosate of Cilicia, with an American $1 symbolic lease. The Catholicosate of Cilicia should use the estate as a school for the preparation of clergy and teachers. The newly opened Drepevank of Antelias would be a unique educational institution in the Armenian Diaspora. The role of school and education is crucial for the preservation of the Armenian identity in Diaspora.

The opening of Dprevank took place on October 12, 1930. As a result of important efforts, Dprevank has become one of the pivotal Diaspora educational institutions, which, in its turn, contributed to the strengthening and raising the role of the Catholicosate. In the course of time, Dprevank acquires Pan-Diaspora character.

Պատմա-իրավական հանդես, ԵՊՀ (70) 2 հատոր, 2020

Резюме

ОСНОВАНИЕ ДПРЕВАНКА КАТОЛИКОСАТА ВЕЛИКОГО ДОМА КИЛИКИЙСКОГО

И его роль в образовательной жизни армянских общин Сирии и Ливана

Эдгар Г. Оганнесян
Канд. ист. наук

Ключевые слова - католикосат Великого Дома Киликийского, Антилиас, Дпреванк, армянская диаспора, армянские общины Сирии и Ливана, образовательная жизнь.

Покинув Киликию, католикосат Великого Дома Киликийского в 1930 году обосновался в Антилиасе (Ливан), который не только постепенно превращался в резиденцию Киликийского католикосата, но и стал важным духовным центром армянской диаспоры. Хорошо известно, что в зданиях Антилиаса были расположены бывшие детские приюты под эгидой Американского комитета помощи на Ближнем Востоке. После ликвидации детских домов Американский комитет решает, что эти здании будут бесплатно переданы католикосату Киликии за символическую аренду - 1 американский доллар. Киликийский католикосат должен был использовать эти здания в качестве школы для подготовки духовенства и учителей. Поэтому Дпреванк Антилиаса становится уникальным образовательным учреждением в армянской диаспоре. А школы и образование имели решающее значение для сохранения армянской идентичности в диаспоре.

Открытие Дпреванка состоялось 12 октября 1930 года. В результате больших усилий Дпреванк становится одним из важных образовательных учреждений диаспоры, в свою очередь способствуя укреплению и повышению роли католикосата. Со временем Дпреванк приобретает важную значимость для всей армянской диаспоры.

REFERENCES

1. “Alpom Metsi Tann Kilikioy kat‘oghikosut‘ean yew Dprevank‘in”, Ant‘ilias, Tparan Kat‘oghikosut‘ean Hayots‘ Metsi Tann Kilikioy, 1959 (**In Armenian**).

Էջեր հայագիտության, ԱԳ (ՀԱ) պատի, հատոր 2 (70), տպրիլ-հունիս, 2020

2. “Dprevank‘ Kat‘oghikosut‘ean Metsi Tann Kilikioy. Yisnameak (1930-1980)”, Nyu-York‘, 1981 (**In Armenian**).
3. “Garegin A. Yovsēp‘ean. Kat‘oghikos Metsi Tann Kilikioy (1943-1952)”, hat. B, P‘astat‘ught‘eru yew niwt‘eru zhoghovatsu, khmbagir` **G. Awagean**, Ant‘ilias, Tparan Kat‘oghikosut‘ean Hayots‘ Metsi Tann Kilikioy, 2017 (**In Armenian**).
4. “Libananahay hamaynk‘ě 1915-1990 t‘vakannerin ěst arkhivayin p‘astat‘ght‘eri”, khmbagir` **A. Virabyan**, Yer., “Haykarli”, 2017 (**In Armenian**).
5. “T‘ght‘akts‘ut‘iwn Metsi Tann Kilikioy yerek‘ kat‘oghikosneru yew Amenayn Hayots‘ kat‘oghikos Khorēn A. Muradbēkeani”, “Kilikioy kat‘oghikosut‘ean arkhiwner”, N 3, khmbagir` **G. Shahinean**, Ant‘ilias, Tparan Kat‘oghikosut‘ean Hayots‘ Metsi Tann Kilikioy, 2002 (**In Armenian**).
6. “T‘ght‘akts‘ut‘iwn Sahak B. kat‘oghikosi yew Petros ark‘. Saracheani”, “Kilikioy kat‘oghikosut‘ean arkhiwner”, N 4, khmbagir` **Varuzhan ark‘episkopos**, Nikosia-Kipros, Hamazgayini Vahē Sēt‘ean tp., 2010 (**In Armenian**).
7. “T‘ght‘akts‘ut‘iwn Sahak B. yew Babgēn A. Kat‘oghikosneru”, “Kilikioy kat‘oghikosut‘ean arkhiwner”, N 1, khmbagir` **G. Shahinean**, Ant‘ilias, Tparan Kat‘oghikosut‘ean Hayots‘ Metsi Tann Kilikioy, 1999 (**In Armenian**).
8. “Vaveragrer hay yekeghets‘u patmut‘yan”, Girk‘ D, T. T. Sahak B Khapayean. kat‘oghikos Metsi Tann Kilikioy 1891-1940 t‘t‘., khmbagir` **S. Behbut‘yan**, Yer., “Voskan Yerevants‘i”, 1997 (**In Armenian**).
9. **Babgēn A. Kiwlēsērean**, Patmut‘iwn kat‘oghikosats‘ Kilikioy (1441-ēn minch‘ew mer ōrerě), Ant‘ilias, Tparan Kat‘oghikosut‘ean Hayots‘ Metsi Tann Kilikioy, 1990 (**In Armenian**).
10. **Ch‘ōlak‘ean Y**., Hay veraproghneru teghabashkhumě yew krt‘akan gortsi kazmakerpumn u dprots‘nerě Surioy mēj (1918-1946), “Surioy hayerě”, gitazhoghovi nyut‘er, Beyrut‘, 2018 (**In Armenian**).
11. **Hakobyan M**., P‘astat‘ght‘er Abgaryan avandi yev nra gortsuneut‘yan masin “Banber Hayastani arkhivneri”, Yer., “Haykarli”, 2018 (**In Armenian**).
12. **Zhamkharyan K.,** Krt‘amshakut‘ayin kyank‘ě yev hayapahpanut‘yan khndirnerě Siriayi yev Libanani haykakan hamaynk‘nerum 1920-1930-akan t‘t‘., Yer., “AHA Poligraf”, 2019 (**In Armenian**).
13. **Yeghiayean B.,** Serundi mě dastiarakut‘iwně, Ant‘ilias, Tparan Kat‘oghikosut‘ean Hayots‘ Metsi Tann Kilikioy, 1962 (**In Armenian**).
14. **Yeghiayean B.**, Zhamanakakits‘ patmut‘iwn Kat‘oghikosut‘ean Hayots‘ Kilikioy 1914-1972, Ant‘ilias, Tparan Kat‘oghikosut‘ean Hayots‘ Metsi Tann Kilikioy, 1975 (**In Armenian**).